

«Վաճառող» պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Էրոդավ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ատացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՎ վարչության պահեստ՝ ավան Բալախովիտ ՀՀ ՊՆ 83580 գործմաս :

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի հատուց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### 3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՛ր՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

### 3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այն բանից Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

### 3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 12 915 749.8 (տասներկու միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր քառասունինը դրամ ութսուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի մահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով՝ անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

**5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Սույն պայմանագրի 4-րդ, 5-րդ, 10-րդ, 56-րդ, 57-րդ, 66-րդ, 79-րդ, 81-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի Նախատեսվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը՝ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև չեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա») ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **8. ԱՆՀԱՂՅԱԿԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախնապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կամ արման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր՝ տեղեկություններ և տվյալներ, կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակիրճորեն պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձևից բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալու Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մատուցման օր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին

համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրատարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրատարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կանխարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք բերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿ վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**


**ՎԱՃԱՌՈՂ**

«Ապշտու անության նախարարություն  
ք. Երևան Բազրևանդի 5

«Էրոդավ» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր-Նորք, Բանավան 11/4,

ՀՀ ՖՆ աշխարհագրորդական ծախսերի վարչություն  
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ

«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հ/Կ 1570021033 0100  
Հ/ՀՀ 008854



ՀՀ ՊՆ

Տնօրեն

Ստորագրություններ  
L. Zh. [Signature]  
AH0998222 [Signature]

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի սովանում	Բնութագրող հիմնական հատկանիշները
1	Էլեկտրոնային սլարագաներ (Մինի ԱՀԿ-ի ընդլայնման քարտ)	ՄինիԱՀԿ-ի-Panasonic KX-TA-616 ընդլայնման քարտ KX-TA30874X , Արտադրման տարեթիվ 2009թ. և բարձր
2	Էլեկտրոնային սլարագաներ (Լսափող US-5( )	Լսափող US-50 , հաղորդող ուժեղարարի տպասալով, աղմկակայունՃՅՄԱ-1Ամիկրոֆոնով, ՃՅՄԿ-6Ալսափողով, հավաքված ռետինե ականջակալում, 5 ժիլանոց երկարացման լարով, Արտադրման տարեթիվ 2000թ. և բարձր
3	Էլեկտրոնային սլարագաներ (Մեկուսիչ ժապավեն)	Հոսանքի մեկուսացման համար, երկարությունը ոչ պակաս 9մ, լայնությունը ոչ պակաս 15 մմ, գլանաձևաձևերով պոլիմերային ժապավեն, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
4	Էլեկտրոնային սլարագաներ (էլեկտրոշարաւ)	Տեսակը - Հարվածային, Պատրոնի տեսակը - առանց քանալու Պատրոնի եվազագույն տրամագիծը - 1.5մմ, Պատրոնի առավելագույն տրամագիծը - 13մմ Ծախսվող հզորությունը - 500 Վտ, Առավելագույն պտտման մոմենտը - 7.5 Ն*Մ Պարապ ընթացքի առավելագույն պտույտները - 3000 պտ/ր Հարվածների առավելագույն քանակը - 48000 հարված/րոպե Արագության կարգավորիչ - Առկա, Հակառակ պտույտ - Առկա, Մնուցում - 220Վ/50Հց , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
5	Էլեկտրոնային սլարագաներ (էլեկտրոպտտառակահան)	Պատրոնի տեսակը - առանց քանալու Աշխատանքային ռեժիմները - Շաղափում, պտտականների ձգում. Պատրոնի եվազագույն տրամագիծը - 0.8 մմ, Պատրոնի առավելագույն տրամագիծը - 10 մմ Արագությունների քանակը - 2, Առավելագույն պտտման մոմենտը - 30 Ն*Մ Պարապ ընթացքի առավելագույն պտույտները - 1400 պտ/ր Հակառակ պտույտ - Առկա, Արագության կարգավորիչ - էլեկտրոնային Պտտման մոմենտի կարգավորիչ - 25, Մնուցում - Մարտկոցային Մարտկոցի լարումը - ոչ պակաս 14.4 Վ, Մարտկոցի ունակությունը - ոչ պակաս 1500 մԱ, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
6	Էլեկտրոնային սլարագաներ (Մոնտաժային լանակ (մեծ))	Երկարությունը - 180 մմ, Սայրի լայնությունը - 18 մմ, Սայրի տեսակը - Կասետային, ջարդվող սեզմենտներով, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
7	Էլեկտրոնային սլարագաներ (Մոնտաժային լանակ (միջին))	Երկարությունը - 135 մմ, Սայրի լայնությունը - 9.5 մմ, Սայրի տեսակը - Կասետային, ջարդվող սեզմենտներով, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
8	Էլեկտրոնային սլարագաներ (Կոնտեկտոր հեռախոսի RJ-11 6P4C)	Կոնտակտների տեղերի քանակը - 6, Կոնտակտների քանակը - 4, Կոնտակտների նյութը - պղինձ, Իրանինյութը - պոլիկարբոնատ, Աշխատանքային լարումը - 250 Վ, Կոնտակտների քայլը - 1.02 մմ, Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
9	Էլեկտրոնային սլարագաներ (Կոնտեկտոր հեռախոսի RJ-12 6P6C)	Կոնտակտների տեղերի քանակը 6, Կոնտակտների քանակը 6, Կոնտակտների նյութը պղինձ, Իրանի նյութը պոլիկարբոնատ, Աշխատանքային լարումը 250 Վ, Կոնտակտների քայլը 1.02 մմ, Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
10	Էլեկտրոնային սլարագաներ (Հոսանքի փոխակերպիչ)	Մուտքային լարումը 220Վ, ելքային լարումը 110Վ, հզորությունը ոչ պակասքան 1 Կվտ, 220Վև 110Վվարդակների առկայություն, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
11	Էլեկտրոնային սլարագաներ (Լամպ 1ժ37Բ)	Լամպ 1ժ37Բ , բարձր հաճախականության պենտոդերկոլեկավարման ցանցերով, նախատեսված է խոնելոներկու տարբեր հաճախություններ, ապակյա տարայով, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 5000 ժամ, քաշը 5 գրամ , Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
12	Էլեկտրոնային սլարագաներ (Լամպ ԳՈՒ17)	ԼամպԳՈՒ17 , երկճառագայթային տետրոդ, աշխատում է որպես գններատոր և ուժեղարար բարձր հաճախության տատանումների համար 250 Մհց, ապակյա տարայով, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 400 ժամ, քաշը 25 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
13	Էլեկտրոնային սլարագաներ (Լամպ ԳՈՒ5C)	ԼամպԳՈՒ50 , գններատորային պենտոդ, նախատեսված հզորությանուժեղացման համար, գններացնում է բարձր հաճախության տատանումները հաղորդիչ սարքավորումներում, ապակյա տարայով, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1750 ժամ, քաշը 100 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
14	Էլեկտրոնային սլարագաներ (Լամպ ԳՈՒ74Բ)	ԼամպԳՈՒ74Բ , գններատորային տետրոդ, նախատեսված որպես ուժեղարար միաշերտ ռադիոհաղորդիչ սարքավորումներում 60 Մհց հաճախականության տիրույթում, մետաղյա կերամիկական ձևավորմամբ, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 550 գրամ, հովացումը օդային 35մ3/ժ,

		Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
15	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՍ15Բ)	Լամպ ԳՍ15Բ, մետաղյա կերամիկական գեներատորային տետրոդ, նախատեսված է բարձր հաճախության տատանումների գեներացիայի և հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 140գրամ, հովացումը օդային 280մ3/ժ, Արտադրման տարեթիվ 2007թ. և բարձր
16	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՍ14)	Լամպ ԳՍ14, տիտանակերամիկական գեներատորային տրիոդ, նախատեսված է բարձր հաճախության տատանումների գեներացիայի և հզորացման համար սանտիմետրային և մետրային տիրույթում, աշխատանքային ժամանակը ոչ պակաս 500 ժամ, քաշը 20 գրամ, Արտադրման տարեթիվ 2007թ. և բարձր
17	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ս17Կ)	Լամպ 6Ս17Կ, մետաղյա կերամիկական գեներատորային տրիոդ, նախատեսված է բարձր հաճախության տատանումների լարման գեներացիայի և հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 5 գրամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
18	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ժ9Պ)	Լամպ 6Ժ9Պ, բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 15 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
19	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ժ11Պ)	Լամպ 6Ժ11Պ, բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 17 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
20	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Է5Պ)	Լամպ 6Է5Պ, ելքային բարձր հաճախության տետրոդ, նախատեսված է լարման և հզորության հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 500 ժամ, քաշը 20 գրամ, խրոցային լարերը PWS, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
21	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ց19Պ)	Լամպ 6Ց19Պ, դիոդօջսիդային կատոդով, նախատեսված է որպես դեմաֆերտողային ցանցերի ընդունիչներում, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 20 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
22	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ժ5Բ)	Լամպ 6Ժ5Բ, ապակյատարայով բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 2000 ժամ, քաշը 5 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
23	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ժ45Բ)	Լամպ 6Ժ45Բ, ապակյա տարայով բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 2000 ժամ, քաշը 5 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
24	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ43Ի)	Լամպ ԳՈՒ43Ի, գեներատորային տետրոդ, նախատեսված է որպես ուժեղարար բարձր հաճախության տատանումների համար, միաշերտ ազդանշանների ուժեղացում ուղիղ հաղորդիչ սարքավորումներում 100 Մհց հաճախականության տիրույթում 1,6 կՎտ, մետաղյա կերամիկական ձևավորմամբ, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ, քաշը 1500 գրամ, հովացումը օդային 200մ3/ժ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
25	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ժ10Պ)	Լամպ 6Ժ10Պ, ապակյա տարայով բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 2000 ժամ, քաշը 15 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
26	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ308)	PNP անցումով 1Տ308 տրանզիստոր, հզորությունը 150մՎտ, կոլեկտոր-բազալարումը 20վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 3վ, հոսանքի ուժը 50մա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
27	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ403)	PNP անցումով 1Տ403 տրանզիստոր, հզորությունը 4Վտ, կոլեկտոր-բազալարումը 45վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 20վ, հոսանքի ուժը 1250մա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
28	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ921)	NPN անցումով ԿՏ921 տրանզիստոր, հզորությունը 12.5Վտ, կոլեկտոր-բազալարումը 65վ, էմիտոր-բազալարումը 4վ, հոսանքի ուժը 3.5ա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
29	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 06ՏԲ)	Միկրոսխեմա 106ՏԲ1, տրամաբանական էլեմենտներով տրիգեր, լարումը 6Վ, հոսանքի ուժը 18մա, աշխատանքային ջերմաստիճանը -60...+120°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
30	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ903Ա)	Տրանզիստոր ԿՏ903Ա, կրեմնի p-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 30Վտ, էմիտոր-բազալարումը 60վ, քաշը 24գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
31	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԼԼ494)	Տրանզիստոր ԼԼ494xDG SOIC-16 D SUFFIX CASE 751B, լարումը մինչև 42V, հոսանքի ուժը 500մԱ, դիմադրությունը 500 կՕ, աշխատանքային ջերմաստիճանը -55...+125°C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
32	Էլեկտրոնային պարագաներ	Տրանզիստոր ԿՊ103Բ(2Պ103Բ), կրեմնի p-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը

	(Տրանզիստոր Լ Պ103Բ)	120 մԲտ, մաքսիմալ լարումը 15վ, քաշը 1գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
33	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր Լ Պ303Բ)	Տրանզիստոր ԿՊ303Բ(2Պ303Բ) , կրեմնի p-n-p ունիվերսալ անցումով, հզորությունը 200 մԲտ, մաքսիմալ լարումը 25վ, քաշը 0.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
34	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր Լ S305)	Տրանզիստոր ԿS305(1Պ305) , կրեմնի p-n-p ունիվերսալ անցումով, հզորությունը 120 մԲտ, մաքսիմալ լարումը 15վ, քաշը 0.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
35	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր Լ S201Բ)	Տրանզիստոր ԿS201Բ , կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 150 մԲտ, մաքսիմալ լարումը 20վ, քաշը 1գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+85°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
36	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS203Վ)	Տրանզիստոր ԿS203Վ(2S203Վ) , կրեմնի p-n-p ունիվերսալ անցումով, հզորությունը 150մԲտ, մաքսիմալ լարումը 10վ, քաշը 0.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
37	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS313Բ)	Տրանզիստոր ԿS313Բ , կրեմնի p-n-p ունիվերսալ անցումով, հզորությունը 300 մԲտ, մաքսիմալ լարումը 50վ, քաշը 0.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -40...+85°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
38	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS368Բ)	Տրանզիստոր ԿS368Բ , կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 225 մԲտ, մաքսիմալ լարումը 15վ, քաշը 1գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
39	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS610Ա)	Տրանզիստոր ԿS610Ա , կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 1.5Բտ, մաքսիմալ լարումը 20վ, քաշը 1գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
40	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS837Ա)	Տրանզիստոր ԿS837Ա , կրեմնի p-n-p ունիվերսալ անցումով, հզորությունը 30Բտ, մաքսիմալ լարումը 80վ, քաշը 2.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
41	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS838Ա)	Տրանզիստոր ԿS838Ա , կրեմնի p-n-p ունիվերսալ անցումով, հզորությունը 30Բտ, մաքսիմալ լարումը 80վ, քաշը 2.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
42	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր 1ԼS251)	Տրանզիստոր 1ԼS251 , կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 400մԲտ, մաքսիմալ լարումը 45վ, քաշը 0.4գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
43	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿՊ306Ա)	Տրանզիստոր ԿՊ306Ա , գերմանիի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 150 մԲտ, մաքսիմալ լարումը 20վ, քաշը 0.5գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
44	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS630Բ)	Տրանզիստոր ԿS630Բ , կրեմնի մետաղական կորպուսով, n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 0.8Բտ, մաքսիմալ լարումը կոլեկտոր-բազա 120վ, լարումը էմիտոր-բազա 7վ, քաշը 2գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
45	Էլեկտրոնային սլարագաներ (Տրանզիստոր ԿS605Բ)	Տրանզիստոր ԿS605Բ , կրեմնի մետաղական կամ պլաստմասե կորպուսով, n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 0.8Բտ, մաքսիմալ լարումը կոլեկտոր-բազա 300վ, լարումը էմիտոր-բազա 5վ, քաշը մետաղական 2գ, պլաստմասե 1գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
46	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 134ԻՄ2)	Ինտեգրալային միկրոսխեմա 134ԻՄ2 (155ԻՊ2) , պարունակում է 178 ինտեգրալային էլեմենտ, լարումը 5 Բ*10%, հոսանքի ծախսը 12մԱ, քաշը 1.3, գաշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
47	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 134ԼԲ1)	Ինտեգրալային միկրոսխեմա 134ԼԲ1 , 4 տրամաբանական 2Մ-HE/2ՈՒՄ-HE էլեմենտ, պարունակում է 38 ինտեգրալային էլեմենտ, լարումը 5 Բ*10%, քաշը 0.4գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
48	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ2Ա)	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ2Ա, լարման կարգավորիչ, պարունակում է 24 տրամաբանական էլեմենտ, մուտքային լարումը 40վ, ելքային լարումը 12-30վ, հոսանքի ծախսը 150մԱ, քաշը 1.4գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
49	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ3)	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ3 , լարման կարգավորիչ, մուտքային լարումը 40վ, ելքային լարումը 3-30վ, հոսանքի ծախսը 150մԱ, քաշը 3գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
50	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ5Ա)	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ5Ա , լարման կարգավորիչ, պարունակում է 39 տրամաբանական էլեմենտ, մուտքային լարումը 15վ, ելքային լարումը 5 *0,1վ, հոսանքի ծախսը 3Ա, քաշը 5գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
51	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 140ՈՒԴ6Բ)	Ինտեգրալային միկրոսխեմա 140ՈՒԴ6Բ , պարունակում է 4 տրամաբանական 2Մ-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 100 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
52	Էլեկտրոնային սլարագաներ (Միկրոսխեմա 168ԿS2Ա)	Ինտեգրալային փոխանցատիչով միկրոսխեմա 168ԿS2Ա , պարունակում է 4 ինտեգրալային էլեմենտ և 4 դիոդ, քաշը 1գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր

53	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա 164ԻՌ2)	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԻՌ2 , կրկնակի 4 ստատիկ քայլի ռեգիստր, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ, քաշը 0.8գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
54	Էլեկտրոնային սյարագաներ (Դիոդ ULL107A)	Ինֆրակարմիր ճառագայթող դիոդ ULL107A կամ 3L107A , ճառագայթման հզորությունը 10մՎտ, մշտական հաստատուն հոսանք $T < +35^{\circ}\text{C}$ ..... 100 մԱ, աշխատանքային ջերմաստիճանը $-60...+85^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
55	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա 164SU1)	Ինտեգրալային միկրոսխեմա 164SU1 , պարունակում է 2 D տիպի տրիգեր, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100000 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
56	Էլեկտրոնային սյարագաներ (Icom F3026 պլեխավաք)	Հաճախականության տիրույթը 136-174Մհց, դիմադրությունը 50 Օհմ, խրոցի տիպը BNC IcomRF-, ուժեղացումը 1.8 DBI, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
57	Էլեկտրոնային սյարագաներ (Ճկուն լենտ՝ շլեյֆ VX-1700 համար)	30 կոնտակտով հարթ, ճկուն ժապավենատիպ մալուխ, PIN flat Cable FFC FPC, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
58	Էլեկտրոնային սյարագաներ (Ելքային տրանզիստոր AV-28)	Alinco DR-130 ռ/կ-խորանգիստոր ԳԿԱ տիրույթի ռադիոկայանների (136- 174 MHz) հզորության ուժեղարարների համար, հզորությունը 5 վտ, լարումը մինչև 16վ, աշխատանքային ջերմ, $-40 +100^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
59	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա DUPC494C)	Կարգավորման փոխակերպիչ, 16 կոնտակտներով պլաստիկ DIP, սնուցման լարումը 7-40վ, ելքային լարումը 40վ, հոսանքի ուժը 250մա, աշխատանքային ջերմաստիճանը $-55...85^{\circ}\text{C}$ ., Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
60	Էլեկտրոնային սյարագաներ ( VX-1700 ռադիոկայանի հիմնական տպասալ)	Հիմնական տպասալ Main Unit ,HD64F2134ATF20 պրոցեսորով, DSP-ICE, DSP-CLK, J1014, J1015, J1016, J1017, J1018 վարդակներով, մուտքային լարումը 13վ, աշխատանքային ջերմաստիճանը $-10...55^{\circ}\text{C}$ ., Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
61	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա 526ՊՍ1)	Ինտեգրալային միկրոսխեմա 526ՊՍ1 , կրկնակի բալանսով, Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
62	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա 2SU622)	միկրոսխեմա 2SU622 , տրանզիստորային p-n-p մատրիցայով, հզորությունը 400 մԵտ, մաքսիմալ լարումը 40վ, քաշը 0.4գ, Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
63	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա 164SU2)	Միկրոսխեմա 164SU2 , կազմված 2 մտիպիտրիգերով, քաշը 1 գ, Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
64	Էլեկտրոնային սյարագաներ (Միկրոսխեմա AN78L05M Smd)	AN78L05M Smd () դրական 3 ելքանի լարումով կարգավորիչ, հոսանքի ուժը 100մԱ, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
65	Էլեկտրոնային սյարագաներ (ռ/կայանի տրանզիստոր TK112508M)	IC F3GT ռ/կ-համար, TK112508M , NPN տիպիտրանզիստոր լարման կարգավորիչ, սնուցման լարումը 16վ, աշխատանքային ջերմ, $-30$ to $+80^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
66	Էլեկտրոնային սյարագաներ (Icom V-82 պլեխավաք)	Icom V-82 տիպիտրանզիստորային համար (), հաճախականության տիրույթը 136-174Մհց, դիմադրությունը 50 Օհմ, խրոցի տիպը BNC, ուժեղացումը 1.8 DBI, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
67	Էլեկտրոնային սյարագաներ (ռ/կայանի տրանզիստոր 2SC2904)	IC R-75/R-78 ռ/կ-ի 2SC2904 , NPN տիպիտրանզիստոր ԿԱ տիրույթի ռադիոկայանի սնուցման բլոկի համար, լարումը 16վ, կոլեկտոր-բազալարումը՝ 50վ, կոլեկտոր-էմիտորլարումը՝ 5վ, էմիտոր-բազալարումը՝ 20վ, աշխատանքային ջերմ, $-55$ to $+155^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
68	Էլեկտրոնային սյարագաներ (ռ/կայանի դիոդ 1SV312)	IC R-75/R-78 ռ/կ-ի 1SV312 ԿԱ տիրույթի ռադիոկայանի համար, 4 ելք՝ 2 անող, 2 կատող լարումը 50վ, աշխատանքային ջերմ, $-55$ to $+125^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
69	Էլեկտրոնային սյարագաներ (ռ/կայանի SMD ռեգիստոր 500 Օհմ)	IC R-75/R-78 ռ/կ-ի SMD ռեգիստոր 501 , նոմինալ դիմադրությունը 500 Օհմ, հզորությունը 0.125Վտ, լարումը 250վ, աշխատանքային ջերմ, $-55...155^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
70	Էլեկտրոնային սյարագաներ (Ստաբիլիզատոր NJM2870 5վ)	Ստաբիլիզատոր NJM2870 5վ , ցածր լարման կարգավորիչ, սնուցման լարումը 14վ, ելքային լարման հոսանքի ուժը 150մԱ, ելքային լարումը 5վ, աշխատանքային ջերմ, $-40$ to $+120^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
71	Էլեկտրոնային սյարագաներ (Կոնդենսատոր 47Mkf x 160v)	Կոնդենսատոր 47Mkf x 160v, էլեկտրոլիտային այլոմինե կրպուտով աշխատանքային լարումը 160վ, նոմինալ ունակությունը 47 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը $-25...105^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
72	Էլեկտրոնային սյարագաներ (Կոնդենսատոր 1500Mkf x6.3v)	Կոնդենսատոր 1500Mkf x6.3v, էլեկտրոլիտային այլոմինե կրպուտով աշխատանքային լարումը 6.3վ, նոմինալ ունակությունը 1500 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը $-25...105^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
73	Էլեկտրոնային սյարագաներ (Կոնդենսատոր 100Mkf x 450v)	Կոնդենսատոր 100Mkf x 450v, էլեկտրոլիտային այլոմինե կրպուտով աշխատանքային լարումը 450վ, նոմինալ ունակությունը 100 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը $-25...105^{\circ}\text{C}$ , Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
74	Էլեկտրոնային սյարագաներ	Կոնդենսատոր 200Mkf x 450v, էլեկտրոլիտային այլոմինե կրպուտով

	(Կոնդենսատոր 200Mkf x 450v)	աշխատանքային լարումը 450վ, նոմինալ ունակությունը 200 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
75	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 220v)	Կոնդենսատոր Cd60 , առանց բևեռ, 1000 մկՓ 220 B1000Mkf x 220v, էլեկտրոլիտային այլոմինե կորպուսով, աշխատանքային լարումը 220վ, նոմինալ ունակությունը 1000 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
76	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյե ՌԵՍ32)	Ռեյե ՌԵՍ32 PՓ4.500.335-01(PՓ0.450.034TY) , երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, փաթույթի դիմադրությունը 175 Օհմ, հոսանքի աշխատանքային ուժը 35մԱ, աշխատանքային լարումը 10-13վ, բացթողման հոսանքի ուժը 8մԱ, աշխատանքային ջերմաստիճանը -60...85C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
77	Էլեկտրոնային պարագաներ (Է.գողիչ 220վ 40վտ)	սնուցումը 220վփոփոխական հոսանք, հզորությունը 40վտ, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
78	Էլեկտրոնային պարագաներ (Է.գողիչ 220վ 60վտ)	սնուցումը 220վփոփոխական հոսանք, հզորությունը 60վտ, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
79	Էլեկտրոնային պարագաներ (Ձողիչ 50վտ, 100-420 C)	Ինֆրակարմիր գողիչ YaXun 861D , ներքին տաքացուցիչով, ինֆրակարմիր կրակիչ, ֆեն, 220վ, 50Հգ, 50վտ, 100-420 C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
80	Էլեկտրոնային պարագաներ (Ալեխավաք Motorola XIR P8268 )	Ալեխավաք Motorola XIR P8268 ո/կիսամարիաճախականությունը 136-174 մՀգ, խրոցի տիպը SMA Female , Արտադրման տարեթիվ 2012թ. և բարձր
81	Էլեկտրոնային պարագաներ (Հիմնաթթու)	կալիիդիդրոքսիդ KOH, սպիտակագույն, ալկալու տեսակարար պարունակությունը ոչ պակաս 90 % , սողայի պարունակությունը առավելագույնը 0.5%, հերմետիկ 25 կգ փաթեթով, ջրով լուծվող, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տոպի մեջ:

**ԳՆՈՐԴ**

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արշտականության նախարարություն»


«Էրոդավ» ՍՊԸ

«ԱՆ ԱՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ»

Տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



AN0498222

ԳՆԱՆ ՔԱՆԱՆԱԿԱՅՈՒՅՑ

Զափա բաժնի համար	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Ապրանքի մատակարարումը 2017թ. <sup>1</sup> ըստ եռամսյակների
						3-րդ եռամսյակ
1	Էլեկտրոնային պարագաներ (Մինի ԱՀԿ-ի ընդլայնման քարտ)	հատ	6	66000	396000	6
2	Էլեկտրոնային պարագաներ (Լսափող US-50)	հատ	200	11160	2232000	200
3	Էլեկտրոնային պարագաներ (Մեկուսիչ ժապավեն)	հատ	2000	141	282000	2000
4	Էլեկտրոնային պարագաներ (Էլեկտրոշարակի)	հատ	4	30000	120000	4
5	Էլեկտրոնային պարագաներ (Էլեկտրոպտուտակահան)	հատ	4	33000	132000	4
6	Էլեկտրոնային պարագաներ (Մոնտաժային դանակ (մեծ))	հատ	4	3000	12000	4
7	Էլեկտրոնային պարագաներ (Մոնտաժային դանակ (միջին))	հատ	4	2700	10800	4
8	Էլեկտրոնային պարագաներ (Կոննեկտոր հեռախոսի RJ-11 6P4C)	հատ	200	30	6000	200
9	Էլեկտրոնային պարագաներ (Կոննեկտոր հեռախոսի RJ-12 6P6C)	հատ	200	36	7200	200
10	Էլեկտրոնային պարագաներ (Հոսանքի փոխակերպիչ)	հատ	10	14400	144000	10
11	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1ժ37Ք)	հատ	50	1110	55500	50
12	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ17)	հատ	50	1800	90000	50
13	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ50)	հատ	100	4500	450000	100
14	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ74Ք)	հատ	10	66600	666000	10
15	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՍ15Ք)	հատ	50	21000	1050000	50
16	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՍ14)	հատ	50	5400	270000	50
17	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ս17Կ)	հատ	50	3000	150000	50
18	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ9Պ)	հատ	50	800	40000	50
19	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ11Պ)	հատ	50	1800	90000	50
20	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Է5Պ)	հատ	30	1200	36000	30
21	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6Ց19Պ)	հատ	20	1800	36000	20
22	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ5Ք)	հատ	50	720	36000	50
23	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ45Ք)	հատ	50	780	39000	50
24	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ43Ք)	հատ	10	93000	930000	10
25	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ10Պ)	հատ	50	1200	60000	50
26	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ308)	հատ	35	390	13650	35
27	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ403)	հատ	80	270	21600	80
28	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ921)	հատ	15	4200	63000	15
29	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 106ՏՈ)	հատ	50	1200	60000	50
30	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ903Ա)	հատ	40	900	36000	40
31	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր TL494)	հատ	20	3300	66000	20
32	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՊ103Ք)	հատ	30	390	11700	30
33	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՊ303Ք)	հատ	30	390	11700	30
34	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ305)	հատ	30	390	11700	30
35	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր	հատ	30	390	11700	30

	ԿՏ201Բ)					
36	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ203Կ)	հատ	30	390	11700	30
37	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ313Բ)	հատ	30	390	11700	30
38	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ368Բ)	հատ	30	480	14400	30
39	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ610Ա)	հատ	30	1380	41400	30
40	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ837Ա)	հատ	30	200	6000	30
41	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ838Ա)	հատ	30	226.66	6799.8	30
42	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 1ՆՏ251)	հատ	20	3000	60000	20
43	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՊ306Ա)	հատ	30	600	18000	30
44	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ630Բ)	հատ	20	1500	30000	20
45	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ605Բ)	հատ	25	420	10500	25
46	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 134ԻԱ2)	հատ	20	2100	42000	20
47	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 134ԼԲ1)	հատ	20	2100	42000	20
48	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ2Ա)	հատ	20	4500	90000	20
49	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ3)	հատ	20	9000	180000	20
50	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ5Ա)	հատ	20	4500	90000	20
51	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 140ՈՒԴ6Բ)	հատ	10	1980	19800	10
52	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 168ԿՏ2Ա)	հատ	20	4500	90000	20
53	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԻՈ2)	հատ	20	1800	36000	20
54	Էլեկտրոնային պարագաներ (Դիոդ ԱԼ107Բ)	հատ	50	300	15000	50
55	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ՏԱ1)	հատ	20	1500	30000	20
56	Էլեկտրոնային պարագաներ (Icom F3026 պլեհավաք)	հատ	70	4500	315000	70
57	Էլեկտրոնային պարագաներ (Ճկուն լենս՝ շլեֆ՝ VX-1700 համար)	հատ	20	4200	84000	20
58	Էլեկտրոնային պարագաներ (Ելքային տրանզիստոր AV-28)	հատ	10	27000	270000	10
59	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա DUJPC494C)	հատ	10	4440	44400	10
60	Էլեկտրոնային պարագաներ ( VX-1700 ռադիոկայանի հիմնական տպասալ)	հատ	2	300000	600000	2
61	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 526ՊԱ1)	հատ	20	3960	79200	20
62	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 2ՏԱ622)	հատ	20	3000	60000	20
63	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ՏԱ2)	հատ	20	600	12000	20
64	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա AN78L05M Smd)	հատ	5	3000	15000	5
65	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի տրանզիստոր TK11250BM)	հատ	10	3840	38400	10
66	Էլեկտրոնային պարագաներ (Icom V-82 պլեհավաք)	հատ	80	5100	408000	80
67	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի տրանզիստոր 2ՏԿ2904)	հատ	10	24600	246000	10
68	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի դիոդ 1ՏՎ312)	հատ	20	4200	84000	20
69	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 500 Ohմ)	հատ	20	750	15000	20
70	Էլեկտրոնային պարագաներ (Ստաբիլիզատոր NJM2870 5Վ)	հատ	10	2640	26400	10

71	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkf x 160v)	հատ	50	240	12000	50
72	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1500Mkf x6.3v)	հատ	50	300	15000	50
73	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 100Mkf x 450v)	հատ	50	276	13800	50
74	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 200Mkf x 450v)	հատ	100	270	27000	100
75	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 220v)	հատ	10	330	3300	10
76	Էլեկտրոնային պարագաներ (Ռեզի ՌԵՍ32)	հատ	30	2300	69000	30
77	Էլեկտրոնային պարագաներ (Էլ.գրղիչ 220Վ 40Վտ)	հատ	90	1700	153000	90
78	Էլեկտրոնային պարագաներ (Էլ.գրղիչ 220Վ 60Վտ)	հատ	90	1700	153000	90
79	Էլեկտրոնային պարագաներ (Ձողիչ 50Վտ, 100-420 C)	հատ	5	41880	209400	5
80	Էլեկտրոնային պարագաներ (Ալեհավաք Motorola XIR P8268 )	հատ	30	6000	180000	30
81	Էլեկտրոնային պարագաներ (Հիմնաթղթու)	կգ	500	2580	1290000	500

ԳՆՈՐԴ


ՎԱՃԱՌՈՂ

« Կաշտականության նախարարություն

« ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՄԵՏԻ ՊԺԿ



Կ. ԿԱՐԱՄԵՏՅԱՆ



Տնօրեն

Գ. ՆԱԳԱՐՅԱՆ

*Handwritten signature*

AH0498222

*Handwritten signature*









Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝  
 \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով

Պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև կշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	Մատակարարված ապրանքների					
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

\_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_ ազգանուն, անուն  
 Կ.Տ.

**Ապրանքը ընդունեց**

\_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_ ազգանուն, անուն  
 Կ.Տ.

ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) \_\_\_\_\_ և  
(Գնորդի անունը)  
\_\_\_\_\_ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
(Վաճառողի անունը)  
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_ -- -ին հանձնման-ընդունման  
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**  
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն